Մինչև թաթարաց արշավանքը Զանգեզուրի բնակչությունը մնում էր առանց տեղահան լինելու, կառչած իր լեռներին և փակ հովիտներին՝ գերազանցորեն հայկական տեղական իշխաններին հպատակվելով։ Թյուրք սելջուկ առաջնորդները թվում է, թե իրենց տրամադրության տակ ունեին այստեղ ոչ բազմաթիվ, գուցե և ավելի լավ զինված և կազմակերպված ուժ, բայց ոչ թե երկրում վերաբնակված քիչ շատ նշանավոր արյունակից աշխատավորությունը, որը փոխած լիներ գավառի ազգագրական պատկերը։ Ուրիշ բնույթ ուներ XIII դ. առաջին կեսում Անդրկովկաս ներխուժած այլ թուրք-թաթարական էթնիկ տարրի երկրում հաստատվելը։ Վերկենալով մոնղոլա-թուրքեստանական տափաստաններից, այս, գլխավորապես ձիաբույծ, վաչկատուն, դեռևս հեթանոս հորդաները առաջ էին շարժվում արևմուտք իրենց ամբողջ ժողովրդական զանգվածով, ընտանիքներով և գույքով, որոնելով նոր բնակավայր։ Հասնելով Կասպից ծովին՝ նրանք բաժանվեցին երկու հեղեղների։ Մինչդեռ մեկը ուղղվեց ծովի հյուսիսով դեպի ռուսական ընդարձակ տափաստանները, մյուսը շրջվելով Կասպից ծովի հարավով և առաջ ընթանալով՝ հանդիպեց մի կողմից՝ Ղարադաղի լեռնային աղեղին և մյուս կողմից՝ ոչ պակաս դժվարանցանելի Թալիշի լեռնաշղթային և ուղղվեց նրանց միջոցով Արդեբիլի և Կարա-սու գետի հովիտներով դեպի Արաքս։ Նրա մակընթացությունից առժամանակ ազատ մնաց և՛ Սիսականը, և՛ Թալիշ-Լենքորանի հարթությունը։ Հասնելով Արաքսին՝ այս ժողովրդական մակընթացությունը փոխադրվեց մյուս ափը՝ հավանական է մոտավորապես այնտեղ, որտեղ հաջորդ դարերում կառուցվեցին Խուդաֆերինի կրկնակի կամուրջները։ «Եւ ապա եկին հասին յաշխարն Աղուանից ամենայն ախիւք բազմութեամբ իւրեանց, և՝ ի բերրի արգավանդ դաշտին՝ որ կոչի Մուղան, լի՛ ամենայն բարութեամբ, ջրով և փայտիւ և մրգով և որսով անդ զետեղեալ՝ հարին զխորանս իւրեանց»[4]։

Զանգեզուր թաթարները մտան Մուղանի դաշտից։ Ամենահարմար ճանապարհն էր Դիզափայտ գագաթից իջնող դարավանդներով, որով այժմ Շահիյոլով foշվorնէրը ուղղվում են Մուղանից դեպի Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի ամառային արոտավայրերը։ Այժմ էլ այս դարավանդների վրա են, որ գրեթե համատարած զետեղված են ադրբեջանական գյուղերը։ Թաթարների առաջնորդը Բաչու-Նոյինն էր... «ընդ այն ժամանակս էր զօրագլուխ Նեստողացն, որպէս թագաւոր ի վերայ ամենեցուն, Բաչու-Նոյինն. և նստէր ի գաւառին Հաբանդայ՝ ի գլուխ Զագեձորոյ»[5]։ Զիջելով նոր էթնիկ տարրին հողերի մի մասը, հայ բնակչությունը ետ է քաշվում ավելի դեպի արևմուտք՝ սեղմվելով Զանգեզուր-Ալանդյազ լեռնաշղթային։ Սակայն հավանորեն դիջած տերիտորիան տակավին ընդարձակ չէր. գոնե այդ բանը չէ նշում իրադարձություններին ժամանակով շատ մոտիկ Օրբելյան պատմագիրը։ Այդ միջոցին հարևան Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հայերը, օգտվելով իրենց գետահովիտների նեղ բերանների մուտքը կապելու դյուրությունից, կարողացան թույլ չտալ թաթարական հրոսակներին տափաստաններից բարձրանալ Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային լանջերով վեր։ Երկրորդ թաթարական մեծ ալիքը սկիզբ առնելով Սամարղանդից Լանկ-Թեմուրի առաջնորդությամբ՝ տարբերվում էր առաջինից իր ավելի ռազմական կազմակերպվածությամբ և

---

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, 1958, Մոսկվա, գլ. Ի, էջ 137։

[5] Օրբէլեան Ստ., գլ. ԿԶ, էջ 405—406։